ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 140-Ա
« 23 » ՄԱՅԻՍԻ 2025Թ.
«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, 96-րդ հոդվածով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի է) ենթակետով, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N129-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և հիմք ընդունելով Կարեն Ասատրյանի հետ կնքած 2019 թվականի մայիսի 23-ի N416 աշխատանքային պայմանագրի 5.1 կետի ա/ ենթակետը, Կարեն Ասատրյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2025 թվականի մայիսի 26-ից լուծել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Ասատրյանի հետ կնքած 2019 թվականի մայիսի 23-ի N416 աշխատանքային պայմանագիրը:

2. 2025 թվականի մայիսի 26-ից Կարեն Ասատրյանին նշանակել «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը, բայց ոչ ավելի քան վեց ամիս ժամկետով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Ասատրյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

2025-05-23 16:37:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր